ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/01

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Աութսորս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Տ. Հովհաննիսյանի (լիազորագիր, տրված՝ 13.01.2020թ.)

ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչներ՝

Ա. Ադիլխանյանի (լիազորագիր, տրված՝ 14.01.2020թ.)

Վ. Հարությունյանի (լիազորագիր, տրված՝ 14.01.2020թ.)

քննելով ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար սեմինարների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Աութսորս» ՍՊԸ-ի կողմից 08.01.2020թ. ներկայացված (08.01.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/01 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Աութսորս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Աութսորս» ՍՊԸ-ն 08.01.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար սեմինարների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

24.12.2019թ. ժամը 12:00-ին մասնակիցները ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն հրավիրվել են գների նվազեցման շուրջ բանակցությունների, որի արդյունքում 24.12.2019թ. թիվ 6 արձանագրությամբ և պայմանագիր կնքելու մասին հայտարարությամբ «Աութսորս» ՍՊԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի հաղթող մասնակից:

26.12.2019թ. Ընթացակարգի քարտուղարը հրապարակել է ևս մեկ արձանագրություն 6 /24.12.2019թ./, որի համաձայն հաղթող մասնակից է ճանաչվել «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն:

24.12.2019թ. ժամը 12:00-ին կազմակերպված գների նվազեցման շուրջ բանակցությունների ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարել է, որ մասնակիցների սակարկվող գնային առաջարկները չեն կարող պակաս լինել հայտով ներկայացված գնային առաջարկում նշված ինքնարժեքից /համաձայն Օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասի, այն է որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով/ ինչի արդյունքում առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ընկերությունը:

24.12.2019թ. հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն, որի համաձայն՝ հաղթող է ճանաչվել «Աութսորս» ՍՊԸ-ն:

Սակայն 26.12.2019թ. հրապարակվել է նոր թիվ 6 արձանագրություն և պայմանագիր կնքելու մասին հայտարարություն, համաձայն որոնց առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն՝ այն պատճառաբանությամբ, որ հնարավոր է սակարկում անել գնային առաջարկում նշված ինքնարժեքից:

Ինչպես նաև, տվյալ Ընթացակարգի շրջանակներում, համաձայն 26.12.2019թ. հրապարակված թիվ 6 արձանագրության, անգործության ժամկետի ավարտն է 29.12.2019թ., ինչը հակասում է Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի պայմաններին:

Այսպիսով՝ Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի որոշումները հանգեցնում են Օրենքի 38-րդ հոդվածում նշված նախապայմաններին, այն է՝ հանգեցնում է գնումների գործընթացում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների:

Բողոքաբերը բողոքով խնդրել է՝

1. Չեղյալ հայտարարել «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/52» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 26.12.2019թ. տեղեկագրում հրապարակված թիվ 6 արձանագրությունը.

2. Չեղյալ հայտարարել «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/52» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 26.12.2019թ. տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

«Աութսորս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.01.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

<u>2. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 13.01.2020թ. թիվ 1/17-2/254-2020 գրությամբ ներկայացրել է բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.01.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր

ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր առարկեցին բողոքի դեմ՝ հայտնելով, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ որևէ սահմանափակում առկա չէ գների շուրջ բանակցությունների ընթացքում նոր գնային առաջարկ, այդ թվում՝ նոր ինքնարժեք ներկայացնելու վերաբերյալ, միևնույն ժամանակ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից տեղի է ունեցել վրիպակ և սխալ է գնահատվել մասնակիցների գնային առաջարկները, ուստի սկզբնական արձանագրության մեջ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը համարվել է «Աութսորս» ՍՊԸ-ն:

Ինչ վերաբերում է տեղեկագրում չորս անգամ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակելուն, ապա սույն մասով ՀՀ ֆինանսների նախարարությունում հնչեցված հարցի կապակցությամբ իրականացվում է ծառայողական քննություն՝ համապատասխան հանգամանքները պարզելու համար:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/01 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/01 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցներին հայտ են ներկայացրել «Աութսորս» և «Պրեստիժ Լենդ» ՍՊ ընկերությունները:

2. www.gnumner.am կայքում 25.12.2019թ. հրապարակված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2019թ. թիվ 6 արձանագրության համաձայն՝ «Աութսորս» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

3. www.gnumner.am կայքում 26.12.2019թ. հրապարակված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2019թ. թիվ 6 արձանագրության համաձայն՝ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Աութսորս» ՍՊԸ-ի կողմից 08.01.2020թ. ներկայացված բողոքը, ՀՀ ֆինանսների նախարարության 13.01.2020թ. թիվ 1/17-2/254-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ

ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցներին հայտ են ներկայացրել «Աութսորս» և «Պրեստիժ Լենդ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.12.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.

N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոշվել է կազմակերպել գների նվազեցման շուրջ միաժամակյա բանակցություններ:

www.gnumner.am կայքում 25.12.2019թ. հրապարակված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2019թ. թիվ 6 արձանագրության համաձայն՝ «Աութսորս» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

www.gnumner.am կայքում 26.12.2019թ. հրապարակված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2019թ. թիվ 6 արձանագրության համաձայն՝ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, որին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

Այսպիսով՝ «Աութսորս» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որում **ինքնարժեքը նշվել է 5 380 000 ՀՀ դրամ, շահույթը՝ 3 620 000 ՀՀ դրամ, ԱԱՀ-ն 0 ՀՀ դրամ, ընդհանուր գինը՝ 9 000 000 ՀՀ դրամ:**

«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որում **ինքնարժեքը նշվել է 6 791 667 ՀՀ դրամ, շահույթը՝ 1 358 333 ՀՀ դրամ, ԱԱՀ-ն 1 630 000 ՀՀ դրամ, ընդհանուր գինը՝ 9 780 000 ՀՀ դրամ:**

www.gnumner.am կայքում 25.12.2019թ. հրապարակված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2019թ. թիվ 6 արձանագրության ամրագրվել է, որ 24.12.2019թ. ժամը 12:00-ին 10 րոպե տևողությամբ վարած բանակցությունների արդյունքում «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն 9 780 000 ՀՀ դրամի փոխարեն առաջարկել է 8 000 000 ՀՀ դրամ, իսկ «Աութսորս» ՍՊԸ-ն 9 000 000 ՀՀ դրամի փոխարեն առաջարկել է 6 790 000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության համաձայն՝ «Աութսորս» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված և վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

Միևնույն ժամանակ 26.12.2019թ. www.gnumner.am կայքում կրկին հրապարակվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2019թ. թիվ 6 արձանագրություն, որի համաձայն՝ 24.12.2019թ. ժամը 12:00-ին 10 րոպե տևողությամբ վարած բանակցությունների արդյունքում «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է հետևյալ գնային առաջարկը՝ **ինքնարժեք՝ 6 566 666,67 ՀՀ դրամ, շահույթ՝ 100 000**

ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 1 333 333.33 ՀՀ դրամ, ընդհանուր գին՝ 8 000 000 ՀՀ դրամ: «Աութսորս» ՍՊԸ-ի կողմից առաջարվել է ինքնարժեք՝ 5 380 000 ՀՀ դրամ, շահույթ՝ 1 410 000 ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 0 ՀՀ դրամ, ընդհանուր գին՝ 6 790 000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության համաձայն՝ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, որին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և **<u>չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:</u>** Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 5-րդ կետի 5.1 ենթակետով սահմանվել է, որ առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և **<u>չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:</u>** Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի կողմից ի սկզբանե հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի բաղադրիչը կազմել է **6 791 667 ՀՀ դրամ**, որը սակայն հետագայում մասնակցի կողմից նվազեցվել է **(6 566 666,67 ՀՀ դրամ)** գների շուրջ միաժամանակյա բանակցությունների արդյունքում, ինչը սակայն գտնում եմ, որ հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջներին, քանի որ նշված նորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջարկվող գինը չի կարող պակաս լինել նույն կետով սահմանված ծախսերի ինքնարժեքից, որը և ի սկզբանե ներկայացվել է մասնակցի կողմից հայտով: Հետևաբար միաժամանակյա բանակցությունների արդյունքում մասնակցի կողմից չի կարող նվազեցվել գնային առաջարկի ինքնարժեքի բաղադրիչը, քանի որ դա կարող է հանգեցնել նաև գնումների գործընթացի շրջանակներում ոչ խտրական հիմունքներով կազմակերպման, մրցակցության խրախուսման, գնումների գործընթացի մասնակցելու իրավահավասարության սկզբունքների խախտման:

Դրա հետ մեկտեղ արձանագրում եմ նաև, որ www.gnumner.am կայքում հրապարակվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 6 թվով երկու իրարամերժ արձանագրություններ, որոնցից 25.12.2019թ. հրապարակված արձանագրությամբ ընտրված մասնակից է ճանաչվել «Աութսորս» ՍՊԸ-ն, իսկ 26.12.2019թ. հրապարակված արձանագրությամբ՝ նույն Ընթացակարգի արդյունքներով ընտրված մասնակից է ճանաչվել «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն: Գտնում եմ, որ սույն մասով ևս գնահատող հանձնաժողովի կողմից չեն պահպանվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները՝ կապված հայտերի գնահատման և ընտրված մասնակից ճանաչելու գնահատող հանձնաժողովի գործողությունների օրենսդրորեն ամրագրված կարգավորումների հետ, քանի որ գնումների մասին ՀՀ օրենսդրությունը հստակ սահմանում է հայտերի բացման, գնահատման, ընտրված մասնակից ճանաչելու, պայմանագիր կնքելու մասին որոշում կայացնելու՝ գնահատող հանձնաժողովի գործողությունների հաջորդականությունը և իրավասությունների շրջանակը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Աութսորս» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Աութսորս» ՍՊԸ-ի կողմից 08.01.2020թ. ներկայացված բողոքը բավարարել.

1. Պարտավորեցնել «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 26.12.2019թ. թիվ 6 արձանագրությունը.

2. Պարտավորեցնել «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել ընթացակարգի արդյունքներով կայացրած պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**